ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 15

14 ապրիլի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69 հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյանի հաղորդումը՝ համայնքի 2011 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման արդյունքների վերաբերյալ՝ համաձայն N 1, N 2, N 3 հավելվածների:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ է

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Մարալիկի քաղաքային համայնքի

ավագանու 2011 թվականի

14 ապրիլի թիվ 15 որոշման

ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ համայնքի
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
1-ին եռամսյակ

հազար դրամ

N	Անվանումը	Հաշվարկային /տարեկան/	Հաշվարկային /եռամսյակ/	փաստացի	%	Ստուգման ամսաթիվ, կատ. մարմին	Ծանություն
1	Հարկային եկամուտներ /տող 1.1+տող 1.2/	20000.0	4200.0	2150.7	51.2		
1.1	Հողի հարկ	11000.0	2200.0	1124.9	51.1		
1.2	Գույքահարկ	9000.0	2000.0	1025.8	51.3		
2	Տուրքեր /տող 2.1+տող 2.2/	9000.0	2900.0	1708.2	58.9		
2.1	Պետական տուրք	5000.0	1900.0	929.6	48.9		
2.2	Տեղական տուրք	4000.0	1000.0	778.6	77.9		
3	Ոչ հարկային եկամուտներ /տող 3.1+տող 3.2+ տող 3.3+տող 3.4 +տող 3.5/	18722.3	4600.0	1827.6	39.7		
3.1	Համայնքի սեփականություն համարվող պահուստային հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ	1200.0	800.0	153.8	19.2		
3.2	Վարչական իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներից եկամուտներ	300.0	150.0	1.3	0.9		
3.3	ՏԻՄ-երի և ենթակա բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտներ	4000.0	1000.0	880.0	88.0		
3.4	Տեղական վճարներ	400.0	150.0	53.5	35.7		
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	12822.3	2500.0	739.0	29.6		

4	Կապիտալ գործառնություններից եկամուտների համայնքային սեփականության /ներառյալ հողերի/ օտարումից ստացվող միջոցներ /տող 4.1+ տող 4.2/						
4.1	Հողի օտարումից մուտքեր						
4.2	Հիմնական միջոցների օտարումից մուտքեր						
5	Ընդամենը սեփական եկամուտներ /տող1+տող2+տող3+տող4+ տող5/	47722.3	11700.0	5686.5	48.6		
6	Պաշտոնական տրանսֆերտների ձևով ստացվող եկամուտներ /տող5.1+տող5.2+տող5.3/	67034.7	16758.7	16758.7	100.0		
6.1	Դոտացիա	66121.4	16530.3	16530.4	100.0		
6.2	Այլ դոտացիաներ	913.3	228.4	228.3	100.0		
6.3	Սուբվենցիաներ						
7	Համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ	195.6	195.6	195.6	100.0		
8	ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցներ	3725.2	805.0	505.0	62.7		
Ընդամենը եկամուտներ /տող5+տող6+տող7+տող8/		118482.2	29263.7	22950.2	78.4		

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մարալիկի քաղաքային համայնքի
ավագանու 2011 թվականի
14 ապրիլի թիվ 15 որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի եկամտային մասի կատարման վերաբերյալ

N	Անվանումը	2009թ. փաստացի	2010թ. հաստատ.	2011թ. փաստացի	2010թ. 2009թ.նկատմամբ %	2011թ. 2010թ.նկատմամբ %
1	Հարկային եկամուտներ /տող 1.1+տող 1.2/	3703.2	2612.1	2150.7	70.5	82.3
1.1	Հողի հարկ	2381.2	1499.1	1124.9	62.9	75.0
1.2	Գույքահարկ	1322.0	1113.0	1025.8	84.2	92.2
2	Տուրքեր /տող 2.1+տող 2.2/	1548.4	1602.9	1708.2	103.5	106.6
2.1	Պետական տուրք	1144.3	841.4	929.6	73.5	110.5
2.2	Տեղական տուրք	404.1	761.5	778.6	188.4	102.2
3	Ոչ հարկային եկամուտներ /տող 3.1+տող 3.2+ տող 3.3+տող 3.4 +տող 3.5/	758.2	948.8	1827.6	125.1	192.6
3.1	Համայնքի սեփականություն համարվող պահուստային հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ	385.7	247.3	153.8	64.1	62.2
3.2	Վարչական իրավախախտումների համար կիրառված պատժամիջոցներից եկամուտներ	0.3	102.0	1.3	34000.0	1.3
3.3	ՏԻՄ-երի և ենթակա բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտներ	281.9	401.0	880.0	142.2	219.5
3.4	Տեղական վճարներ	-	57.0	53.5	-	93.9
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	90.3	141.5	739.0	156.6	522.3
4	Կապիտալ գործառնություններից եկամուտների համայնքային սեփականության /ներառյալ հողերի/ օտարումից ստացվող միջոցներ /տող 4.1+ տող 4.2/					
4.1	Հողի օտարումից մուտքեր					

4.2	Հիմնական միջոցների օտարումից մուտքեր					
5	Ընդամենը սեփական եկամուտներ /տող1+տող2+տող3+տող4+տող5/	6009.8	5163.8	5686.5	85.9	110.1
6	Պաշտոնական տրանսֆերտների ձևով ստացվող եկամուտներ /տող5.1+տող5.2+տող5.3/	13658.0	16571.7	16758.7	121.3	101.1
6.1	Դոտացիա	12863.0	16571.7	16530.4	128.8	99.8
6.2	Այլ դոտացիաներ	795.0	-	228.3	-	-
6.3	Սուբվենցիաներ					
7	Համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ	3517.5	81.4	195.6	-	-
8	ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցներ	501.8	505.0	505.0	100.6	100.0
Ընդամենը եկամուտներ /տող5+տող6+տող7+տող8/		20169.6	22240.5	22950.2	110.3	103.2

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մարալիկի քաղաքային համայնքի
ավագանու 2011 թվականի
14 ապրիլի թիվ 15 որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի 2011 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականը ըստ գործառական դասակարգման

N	Անվանումը	Պլան	Փաստացի	%
1	Օրենսդիր և գործադիր մարմինների, պետ. կառավարում	15208.0	8080.6	53.1
2	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	755.0	727.8	96.4
3	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	180.0	180.0	100.0
4	Տնտեսական հարաբերություններ	-2250.0	900.0	-
5	Շրջակա միջավայրի պաշպանություն	4300.0	2970.0	69.1
6	Բնակարանային շին.	5550.0	1903.0	34.3
7	Հանգիստ, մշակույթ և կրոն	2980.0	2167.0	72.7
8	Կրթություն	5479.0	4276.1	78.0
9	Սոցիալական պաշտպանություն	200.0	90.0	45.0
10	Պահեստային ֆոնդ	2100.0	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		34502.0	21294.5	61.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 16-Ն

14 ապրիլի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 74 հոդվածով, 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2. դրույթով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի N 20 մոնոլիտ բնակելի շենքի հարևանությամբ ավտոտնակ կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0020) 56 քառակուսի մետր հողատարածքը տրամադրել կառուցապատման իրավունքով :
2. Հողատարածքի մեկնարկային վարձավճարի չափ հաստատել բնակավայրի հողի հարկի տարեկան դրույքաչափը:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 17-Ն

14 ապրիլի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի N 19 մոնոլիտ բնակելի շենքի հարևանությամբ առևտրի սրահ կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-020) 108 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 100% -ի չափով՝ 57024 (հիսունյոթ հազար քսանչորս) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 18

14 ապրիլի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 77 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 10 դեկտեմբերի 2010 թվականի թիվ 77 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման N 2 հավելվածի 4-րդ պարբերության (տեխնիկական սպասարկման կազմ) 14-րդ կետի աղբաթափման, նոր մասնագիտացված մեքենայի վարորդ-մեխանիկի հաստիքի դիմաց նշված 50000 (հիսուն հազար) բառերը փոխարինել 55000 (հիսունհինգ հազար) բառերով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ է

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 19

14 ապրիլի 2011 թվական

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5 կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 19 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

N	Ազգանուն,անուն	Գումարի չափ
1.	Սաֆարյան Մարգուշ	10000 (տաս հազար) դրամ
2.	Գասպարյան Վեռա	10000 (տաս հազար) դրամ
3.	Ներսիսյան Սիրվարդ	10000 (տաս հազար) դրամ
4.	Կիրակոսյան Եղսան	10000 (տաս հազար) դրամ
5.	Աղաբաբյան Գագիկ	10000 (տաս հազար) դրամ
6.	Ղազարյան Տելման	10000 (տաս հազար) դրամ
7	Շահբազյան Յուրիկ	10000 (տաս հազար) դրամ

8	Գրիգորյան Կոլյա	10000 (տաս հազար) դրամ
9	Պետրոսյան Նադյա	10000 (տաս հազար) դրամ
10	Գալստյան Անահիտ	10000 (տաս հազար) դրամ
11	Գալստյան Ամալյա	20000 (քսան հազար) դրամ
	Ընդամենը	120000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 20

14 ապրիլի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾԻՑ 450 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի նկատի ունենալով, որ «Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջնորդությամբ բարեգործական հիմնադրամի միջոցներով կատարվելու է շենքային պայմանների բարելավում՝ շուրջ 5 մլն դրամի սահմաններում, ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող համայնքային ենթակայության մշակութային երիտասարդական կենտրոնի զբաղեցրած շենքի արևելյան հատվածից 450 քառակուսի մետր տարածքը անհատույց օգտագործման իրավունքով երեք տարի ժամանակով տրամադրել «Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ է

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 21

14 ապրիլի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 164-Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» 3-րդ կետի, ինչպես նաև « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հաստատել Մարալիկի քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի մայիսի 20-ի «Մարալիկի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի անհատական կազմի համաձայնեցման մասին» N 41 որոշումը:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 22 ՈՐՈՇՄԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝ Մանվել Նազարյան – համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝ Իգիթ Պետրոսյան – համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ՝ Քրիստինե Մկոյան – համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար

Գեղամ Գրիգորյան - համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Սոֆիկ Հակոբյան – Մարալիկի արվեստի դպրոցի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 22

14 ապրիլի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկի վերակազմակերպման վերաբերյալ և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 -րդ հոդվածի 14 կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ղեկավարին Մարալիկի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկը վերակազմակերպելու և համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին առաջարկությանը անդրադառնալ 2011 թվականի բյուջետային տարվա ավարտին՝ նոր 2012 թվականի բյուջետային քննարկումներում ներկայացնելով իրականացվելիք ձեռնարկատիրական գործունեության տեսակների վերաբերյալ հիմնավոր և արդյունավետ առաջարկություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կազմակերպության կողմից նյութական և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման, երեխաների կրթական, առողջապահական, գեղագիտական, ֆիզիկական զարգացման աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու անհրաժեշտության վրա:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ է

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 23

14 ապրիլի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱԵՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից Մարալիկ քաղաքի նախկին ինկուբատոր կայան տանող ճանապարհի և կլոր գոմերի միջնամասում, անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0026--) ԿՍ/12`400 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
4. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 80% -ի չափով՝ 168960 (մեկ հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր վաթսուն) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

14 ապրիլի 2011 թվական

ք. Մարալիկ